

ԳՈՒՆԱՅԻՆ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ*

Նաիրա Ներսիսյան, Նաիրա Ավագյան
Երևանի պետական համալսարան

Գույնը արտահայտչականության հիմնական միջոցներից է: Սարդիկ գույներին տարբեր նշանակություն են տալիս՝ կախված մշակութային, հոգևոր, կենսաբանական, հոգեբանական և այլ գործոններից: Գույների ճանաչողության զարգացումը միասնական պրոցես է, որտեղ այս բոլոր գործոնները համատեղ են ներգործում մարդու գիտակցության վրա: *Գույն* բառի կիրառության ոլորտը ձգվում է լեզվաբանականից մինչև արվեստի տարբեր բնագավառներ՝ նկարչություն, դիզայն, նորաձևություն և այլն: Գունային սիմվոլիկան մեծ դեր ունի նաև կրոնական ծեսերում և առօրյա կյանքում: Հոդվածը քննարկում է գունանունների կիրառությունը դարձվածքներում, ինչպես նաև գունային սիմվոլիկան գրականության մեջ:

Բանալի բառեր. իմաստաճանաչողական մոտեցում, համատեքստ, գունային ընկալում, իմաստակառուցվածքային առանձնահատկություններ, բառիմաստ, դարձվածաբանական իմաստ, առաջնային իմաստ:

Ներածություն

Գույնը կարող է առաջացնել որոշակի հուզական ապրումներ: Գույնի և զգացմունքի համադրության պարզ օրինակ է այն, որ կարմիր, նարնջագույն, դեղին գույները ընկալվում են որպես *տաք*, մինչդեռ կապույտը, մոխրագույնը՝ *սառը*: Կարմիր, նարնջագույն, դեղին գույները առաջացնում են ուրախ հույզեր (երբեմն նաև ագրեսիա), կապույտ և կանաչ գույները՝ խաղաղություն, անդորր, իսկ շագանակագույնը, սևը և մոխրագույնը՝ տխրություն, թախիծ, ընկճախտ: Գույնի հետ կապված հոգեբանական ընկալումները պայմանական են և բավականաչափ տարբերվում են՝ կախված տեղանքից ու պատմական ժամանակաշրջանից: Միջլեզվային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տաք և սառը գույների ամերիկյան և ճապոնական ըմբռնումները էապես նույնն են: Սակայն ճապոնիայում կանաչ և կապույտ գույները ընկալվում են որպես լավ, դրական, իսկ կարմրամանուշակագույն շարքը՝ վատ, բացասական, մինչդեռ Ամերիկայում կարմիր, դեղին, կանաչ գունաշարքը դիտվում է որպես դրական, իսկ նարնջագույն և կարմրամանուշակագույն շարքը՝ բացասական: Սգո գույնը արևմուտքում սևն է. այլ մշակույթներում այս նպատակով օգտագործվում են սպիտակը, մանուշակագույնը կամ ոսկեգույնը:

Գույնի իմաստաճանաչողական մոտեցումները

Միևնույն գույնի իմաստաճանաչողական մոտեցումները տարբեր լեզուներում տարբեր են. օրինակ՝ ռուսերեն *синий* և *голубой* բառերն անգլերեն թարգմանվում են մեկ բառով՝ *blue*. Մեկ բառով են թարգմանվում *сиреневый* և

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.12.2016:

φουλοτσεβսն բառերը՝ *violet*, ինչպես նաև հայերեն *նարնջագույն, գազարագույն, ծիրանագույն* բառերը՝ *orange*: Հին հույները կապույտ գույնի համար համապատասխան բառ չունեին: Նրանք ծովը նկարագրում էին որպես *գինեգույն* (մուգ ինչպես գինին), իսկ երկինքը՝ *բրոնզագույն*: Նրանք կապույտ գույնը չէին ընկալում այնպես, ինչպես մենք ենք այն այժմ ընկալում: *Գույն* տերմինը նրանց համար զգացողություն էր, հոգեբանական հատկանիշների դրսևորում, ինչպես ասենք՝ նոր (թարմ), մուգ, խոնավ, պայծառ և այլն: Միևնույն ժամանակ էսկիմոսները սպիտակ գույնի տասնյոթ բառ ունեն՝ ձյան տարբեր երանգներն ու որակները նկարագրելու համար (*soft snow, frozen snow, melted snow, etc.* - *փափուկ ձյուն, սառած ձյուն, հալված ձյուն* և այլն): Հայերենում գույների սահմանափակման միտում չենք նկատում: Կարելի է ասել, որ հայերենում կան *սպիտակ* բառի տասնյակ հոմանիշներ՝ չհաշված նրա ճկուն գուգակցումը այլ բառերի հետ: Նույն գույնի տարբեր երանգները կարող ենք արտահայտել բառակապակցություններով: Դիտարկենք դա անգլերենի գուգադրությամբ. օրինակ՝ *snow white* (*ձյունասպիտակ*), *chalk white* (*կավձալին սպիտակ*), *frost white* (*սառցասպիտակ*), *milk white* (*կաթնալին սպիտակ կամ կաթնասպիտակ*), *wall white* (*սպիտակ ինչպես պատը*), *swan white* (*սպիտակ ինչպես կարապը*), *silver white* (*արծաթասպիտակ*), *cotton white* (*բամբակի պես սպիտակ*), *marble white* (*մարմարի պես սպիտակ*), *lead-white* (*սպիտակ ինչպես կապար*) և այլն:

Գունանունների կիրառությունը դարձվածքներում

Գունանունները մեծ կիրառություն ունեն դարձվածքներում, որոնք ունեն կայուն քերականական կառուցվածք: Համեմատենք *red carpet* (*special royal treatment; big, warm welcome*), *red tape* (*bureaucratic methods*) և *red dress* բառակապակցությունները: Երեքն էլ ունեն նույն կառուցվածքը՝ ածական+գոյական: Առաջին երկու բառակապակցությունները՝ *red carpet, red tape* որոշ համատեքստերում ունեն դարձվածքային իմաստ, իսկ երրորդը՝ *red dress*, ոչ: Այս արտահայտություններից յուրաքանչյուրի երկրորդ բաղադրիչը կարող է ստանալ հոգնակի թիվ: Եթե *carpet, tape* գոյականները դարձնենք հոգնակի, կստացվի *red carpets, red tapes*. Բառակապակցությունները կորցնում են իրենց իմաստը որպես դարձվածք: Այստեղ մենք կարող ենք անգամ փոխել գույները՝ *green, yellow, brown* և այլն, որովհետև կապը երկու բաղադրիչների միջև մեկ ամբողջականից դառնում է ուղիղ իմաստային: Եթե *dress* գոյականը դարձնենք հոգնակի, կստացվի *red dresses*. Բառիմաստային ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում: Երբեմն դարձվածքի երկրորդ բաղադրիչը (գոյականը) հոգնակի դարձնելիս մի դարձվածքը փոխարինվում է մեկ այլ դարձվածքով. օրինակ՝ *white horse* (*cowardice*) – *վախկոտություն*, մինչդեռ *white horses* (*white-crested waves at sea*) – *սպիտակ ձիեր ծովի վրա*. Ժամանակի ընթացքում դարձվածքը կարող է կորցնել իր իմաստը և դառնալ ուղիղ բառիմաստային բառակապակցություն: Օրինակ՝ *to show the white feather* (*to act as a coward*) – *վախկոտություն ցուցաբերել* արտահայտությունը դարձվածք էր այն ժամանակաշրջանում, երբ տարածված էր աքլորակոթիլը: Այժմ այն տարածում չունի և կորցրել է իր դարձվածաբանական իմաստը: Ուսումնասիրենք հետևյալ դարձվածքները՝ *black mood* (*irritation, anger*) – *վատ տրամադրություն, գայրույթ* և *tickled pink* (*happy or satisfied about something; amused; utterly delighted; pleased*) – *շատ գոհ ու երջանիկ*: Գույների միջոցով զգացմունքները դառնում են ավելի գունեղ, ինտենսիվ և պատկերա-

վոր: Երբ զայրույթը նկարագրում ենք *սև* գույնով, բարկությունը դառնում է ավելի ուժգին և դրամատիկ: Օգտագործելով համապատասխան գույնը՝ մենք մեր զգացմունքն ավելի ընկալելի ենք դարձնում: Մենք արժևորում ենք բառերը և ընդամենը մեկ՝ *վարդագույն (tickled pink)* բառի միջոցով արտահայտում ենք երջանկության մեր զգացողությունը:

Գույները համատեքստում

Այժմ դիտարկենք գույները համատեքստում: *Կարմիր, դեղին, կանաչ, սպիտակ (red, yellow, green, white)* ածականները համատեքստից դուրս պարզապես որոշակի գույներ են: Բայց դրանք կարող են ունենալ շատ լրացուցիչ իմաստներ՝ կախված համատեքստից. օրինակ՝ *green thumb (a talent for gardening, the ability to make things grow)* – *աճեցնելու հմտություն, gray matter (brains, intelligence)* – *ուղեղ, blue blood (the blood of a noble or wealthy or aristocratic family)* – *կապույտ / ազնվական արյուն, black gold (high value of oil)* – *սև նսլի՝ նավթ, black mood (angry or even depressed)* – *զայրացած, ընկճված*: Ինչպես տեսնում ենք՝ այս բառակապակցություններում գույների առաջնային իմաստը որպես *գույն* թուլանում է: Երբեմն գույնն ամբողջովին կորցնում է իր առաջնաիմաստային կարևորությունը՝ *white wine* – *սպիտակ գինի* (իրականում այն դեղնավուն է), *blue blood* – *կապույտ արյուն (այն կարմիր է)*, *black coffee* – *սև սուրճ (այն շագանակագույն է)*, *black box* – *սև արկղ (իրականում այն նարնջագույն է)*: Փոխաբերական իմաստով *white (սպիտակ)* գույնն ունի բարի, լավ, պայծառ, լուսավոր իմաստ՝ *white day, white lie, white witch*: Ի տարբերություն դրա՝ *black (սև)* գույնը արտահայտում է բոլորովին այլ իմաստ՝ *վատ, չար, վտանգավոր՝ black sheep, black humour, black list*: Մյուս գունանունները նույնպես օգտագործվում են բացասական իմաստ արտահայտող բառակապակցություններում, ինչպես ասենք՝ *red flag (sign of danger)*, *red-handed (in the act of committing a crime)*, *in the red (losing money)*, *pink slip (a notice of dismissal from work)*: Անգամ *սպիտակ* գույնը միշտ չէ, որ դրական իմաստով է օգտագործվում՝ *white elephant (a possession that is no longer wanted by its owner, often because it is useless, expensive, or troublesome to maintain)*: Հայերեն *կանաչ-կարմիրի մեջ լինել*՝ նշանակում է լինել ուրախ, երջանիկ, մինչդեռ անգլերեն *to be in the red* նշանակում է ունենալ ֆինանսական խնդիրներ (բանկային հաշվից գումարի դուրսգրումն արվում էր կարմիր թանաքով, իսկ մուտքագրումը՝ սև թանաքով): *To be in the black*՝ նշանակում է լինել ֆինանսական բարվոք վիճակում, մինչդեռ հայերեն *սևի մեջ*՝ նույնն է, թե լինել տխրության, սգո մեջ: *Վարդագույնը* հիմնականում արտահայտում է դրական հույզեր թե՛ անգլերեն, թե՛ հայերեն դարձվածքներում՝ *to see the world through rose-colored glasses* – *աշխարհին նայել վարդագույն ակնոցով, to be in the pink* – *լինել առողջ ու երջանիկ*:

Գունային սիմվոլիկան գրականության մեջ

Բոլոր ժամանակներում գեղարվեստական գրականության մեջ առանձնակի արժեք է ներկայացնում ստեղծագործության գունային սիմվոլիկան: Գույնի և գունային դարձվածքների միջոցով գրողն ավելի նրբակերտ ու զգացմունքային է արտահայտում իր հոգու ապրումները՝ ստեղծագործությունը դարձնելով վառ, ընդգրկուն և գունեղ: Գույնը դառնում է հերոսների ամենատարբեր հոգեկան վիճակների արտահայտման միջոց:

Գեղարվեստական գրականության մեջ կարևոր դեր է խաղում վերնագիրը: Շատ հեղինակների համար խորհրդանշական է իրենց ստեղծագործությունների վերնագրերում օգտագործել գունային սիմվոլիկա՝ ընթերցողին ի սկզբանե ներշնչելով որոշակի տրամադրություն և հույզեր:

Եղիշե Չարենցը (ի դեպ նրան կոչում էին *կարմիր պոետ – red poet / revolutionary or red menace*) իր *Կապուտաշյա հայրենիք* լիրիկական անավարտ պոեմում և *Կապույտ հեռուներ* բանաստեղծությունների շարքում, հենց վենագրից սկսած, անցում է կատարում ցեղասպանության ողբերգական զգացմունքներից դեպի երկնայինն ու կապույտը: *Կապույտը* խորհրդանշում է հույս՝ հասնելու մաքուր, ազնիվ, լուսավոր ու երանելի մի իրականության (*faith, peace, harmony serenity*):

*Օ՛հ, իմ հեռու, կապուտաշյա սիրուհի,
Երկիր իմ որբ, արնաքամ ու ավերակ...*

Ա. Գրինի *Алые паруса (Ալ առագաստներ)* պատմվածքի վերնագիրն արդեն իսկ հուշում է ինչ-որ հրաշալի, կախարդական զգացողություն: Ալ (կարմիր) գույնը խորհրդանշում է կիրք, հեքիաթային սեր, երազանք, սպասում և հավատ (*passion, joy, mysterious love*):

Սթիվեն Քինգի ստեղծագործության վերնագիրը՝ *The Green Mile*, նույնպես շատ խորհրդանշական է: Այդպես էր կոչվում խիստ ռեժիմի բանտը, որտեղ պահում էին մահվան դատապարտվածներին: Դեպի էլեկտրական աթոռ տանող միջանցքը պատված էր կանաչ գորգով: Կանաչ գույնն այստեղ խորհրդանշում է *ձանապարհ դեպի անխուսափելի*, որը վեպում մահն է: *Walk the green mile* դարձվածքը նշանակում է *քայլել, գնալ դեպի անխուսափելի, անելանելի / head towards the inevitable*:

Այրիս Մերոքոն իր *The Sea, the Sea* վեպում գրում է. *When I first met her, I was a green boy*, որտեղ կանաչ՝ *green boy* արտահայտությունը կիրառվում է որպես դարձվածք: *Be green* կամ *be green behind the ears* նշանակում է անփորձ, երիտասարդ:

Իր ստեղծագործություններում Լև Տոլստոյը նույնպես դիմում է գունային սիմվոլիկային՝ ընթերցողին փոխանցելու կերպարների հոգեբանությունն ու ներաշխարհի փոփոխությունները: *Աննա Կարենինա* վեպում Աննան պարահանդես է գալիս սև թավշյա զգեստով. *Анна была не в лиловом, как того непременно хотела Кити, но в черном, низко срезанном бархатном платье, открывавшем её точеные, как старой слоновой кости, полные плечи и грудь*: Սև թավշյա զգեստ, և ասես Աննան սգում է իր իսկ վախճանը: Սևը հակադրվում է մանուշակագույնին: Սև, որը խորհրդանշում է այն սահմանը, որտեղ ավարտվում է կյանքը (*death, evil hopelessness, loss*) և մանուշակագույն, որը խորհրդանշում է երազանք և հույս (*faith, magic, aristocracy*):

Ամերիկացի գրող Ֆ.Ս. Ֆիցջերալդի *Մեծն Չեթսըրի* վեպը հազեցած է գունալին սիմվոլիկայով, որտեղ շատ գունամուններով բառակապակցություններ հանդես են գալիս և՛ ուղիղ, և՛ դարձվածքային իմաստներով: Գույները վեպի բանալին են: Եթե վեպը չդիտարկենք ամբողջական համատեքստում, չբացենք հեղինակի կողմից գույների միջոցով հաղորդած ներիմաստները, ապա այն կկորցնի

իր դրամատիկ և հուզիչ երանգները: *Ոսկեգույնը* վեպում խորհրդանշում է հարստություն, բախտավորություն, հաջողություն (*richness, success, happiness*): Բայց երբեմն ոսկեգույնին պարզապես փոխարինում է *դեղին* գույնը (*կեղծ, չար, հիվանդագին, ինչպես նաև աշուն, տրտմություն, մահ / fake gold, falsity, evil, sickness, artificiality*)՝ շեշտադրելու, որ այդ հարստությունը ընդամենը երևացող մասն է: Ամենակարևորը աչքի համար տեսանելի չէ: Վեպում *ոսկեգույն* և *դեղին* գույների կրողը Գեթսբին է և նրան շրջապատող միջավայրը. [...] *and Gatsby, in a white flannel suit, silver shirt, and gold-coloured tie (հարստություն/wealth) hurried in: [...] that yellow car (wealth, death/հարստություն, մահ): I put my arm around Jordan's golden shoulder (վերնախավ/upper class): [...] and now the orchestra is playing yellow cocktail music (հիվանդացնող/sickening):*

Սպիտակ գույնը խորհրդանշում է մաքրություն, անաղարտություն (*morality, innocence, purity*): Վեպում դրա կրողը Ղեյզին է, բայց այն Ղեյզին, որը մնացել է անցյալում: Հետևաբար սպիտակը նաև խորհրդանշում է սեր, որ այլևս ետ չես բերի: Ղեյզին մարգարտածաղկի պես է՝ առաջին հայացքից սպիտակ (անցյալում), անաղարտ (*innocent, pure*) և ներքուստ՝ դեղին (ներկայում), կեղծ, եսասեր (*fake, evil, selfish*): [...] *high in a white palace the king's daughter, the golden girl (աստվածացրած/idealized Daisy, unblemished and honourable in the first place):*

[...] *they came to a place where there were no trees and the sidewalk was white with moonlight (անաղարտություն/purity): His heart beat faster as Daisy's white face came up to his own (անմեղություն/innocence):*

Կանաչ գույնը շատ կարևոր խորհրդանշան է վեպում: Այն մի կողմից խորհրդանշում է հույս, հավատ, գործողություն, *կանաչ լույս (green light)*, մյուս կողմից՝ հարստություն, կարողություն, փող՝ նպատակներին հասնելու համար (*long green*) և նախանձ (*green with envy*): *You always have a green light that burns all night at the end of your dock (երազանք, փափագ, dream of being reunited with the woman he loves): a green old age (հավերժ երիտասարդ/not faded), green breast of the new world (զարուն, ծաղկունք/nature, freshness, harmony): Gatsby believed in the green light (հույս/hope): In the sunlight his face was green (նախանձ/green with envy):*

Տխուր, անտրամադիր, ձգնաժամային հոգեվիճակները վեպում *կապույտ* գույնի միջոցով են արտահայտվում: *After Myrtle's death George Wilson and Mr. Michaelis are in a blue mood. (դժբախտ/unhappy/depressed): In his blue gardens men and girls came and went (անհույս, տխուր/hopeless, sad):* Լույսը խորհրդանշում է գիշեր, խրախճանք, շամպայն, բայց Գեթսբին հոգու խորքում տխուր է, և լույսը կապույտ է:

Վարդագույնը համատեքստում նույնպես հետաքրքիր կիրառություն ունի: Այն հիմնականում այն տեսարաններում է, որտեղ Գեթսբին և Ղեյզին միասին են: Այն խորհրդանշում է պարզություն, կիրք, կարեկցանք, սեր՝ [...] *and there was a pink and golden billow of foamy clouds above the sea. Like hell he is! He wears a pink suit. Nevertheless, he's an Oxford man.* Այստեղ արդեն վարդագույնը դիտվում է որպես նորահարուստի անձաշակության դրսևորում՝ շեշտադրելով, որ Գեթսբին հեռու է իսկական վերնախավից՝ հարուստ լինելով հանդերձ:

Գունային սիմվոլիկայի վառ օրինակ են Ա. Բակունցի ստեղծագործությունները: Բակունցն ասես բառերով նկարում է զանգեզուրյան բնաշխարհը՝ պատկերելով այդ աշխարհի, մարդու ու բնության բանաստեղծական միասնությունը:

Միտիան պատմվածքը սկսվում է աշնան պայծառ ու հյուսիս գույների նկարագրությամբ. **Կապտավուն սարերն այնքան պարզ, այնքան մոտ էին երևում, որ կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր ծորակները [...]: Աշուն էր՝ դառնաշունչ քամիով, որ ծառերի ձղներից պոկում էր դեղնած տերևները և բշում, տանում հեռու ծորերը:**

Մի փոքրիկ մեջբերում, և ստեղծվում է գույների գործածության տպավորիչ գեղեցկություն ու հուզականություն. և այսպես շարունակ, մինչև պատմվածքի վերջին բառը՝ *լաջվարդ շապիկ, երկնքի լագուր, ոսկեփրփուր հավք, ոսկեդեղձան հյուսքեր, նարնջագույն քարեր, արծաթ սուրմաներ, սև խաղող, և այլն:* Բակունցը կիրառում է *դեղին* բառի զանազան հոմանիշային գործածություններ՝ *դեղնակարմիր, ոսկե, ոսկեփրփուր, ոսկեդեղձան, ոսկեգույն:* Այսպես՝ *դեղինը* յուրահատուկ ջերմություն է փոխանցում իրերին և բնությանը (ինչպես արևը): *Կապույտը* խորհրդանշում է հերոսներին որպես բնական, մաքուր ու ջինջ (ինչպես երկինքը): Պատմվածքում *կարմիրը* ամենատարբեր հոգեվիճակների, հույզերի ու ապրումների արտահայտման միջոցն է՝ վառ զգացմունք, կիրք, ընդվզում, ցավ ու տառապանք: *Արցունքից կարմրած* աչքերը՝ պայծառ, որպես լեռնային ծովակ» արտահայտության մեջ կարմիրն արտացոլում է հոգեկան այն խորը ցավը, տառապանքը, որ ունենում է ամեն մի աղջիկ՝ սիրած տղայի փոխարեն ուրիշ մեկի հետ ամուսնանալու դեպքում:

Ավ. Իսահակյանը Մ. Սարյանի հետ ունեցած իր մի զրույցում շատ դիպուկ է բնորոշում. *Հայաստանում կա մի գրող, որի բառերը զրնգում են կոմիտասյան շնչով և փայլատակում են քո կտավների գույներով: Դա Ակսել Բակունցն է:*

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ գույնը լեզու է առանց խոսքի, բառերի, որոնց միջոցով մենք արտահայտում ենք մեր զգացմունքներն ու հույզերը: Մենք կարող ենք լինել *զայրույթից կարմրած (red with anger)*, կամ կարող ենք *կանաչել նախանձից (green with envy)*: *Գորշ օրը (grey day)* կարող է ձնշել և արդյունքում տալ *կապույտի զգացում feeling blue (feeling sad or depressed)*: Բայց ինչպես Վինսենթ վան Գոգն է ասել՝ *չկա կապույտ առանց դեղինի և նարնջագույնի (there is no blue without yellow and without orange)*:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սեֆերյան, Ս.; Լազարյան, Ա. (2005) *Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան*. (2-րդ հրատ.) Երևան: Անկյունաքար:
2. Fernando, T. S. (2010) *Idioms and Idiomaticity*. Oxford: OUP.
3. Flavell, L. and R. (1992) *Dictionary of Idioms and Their Origins*. London: Kyle Cathie Limited.
4. Hardin, C.L. and Maffi, L. (1997) *Color Categories in Thought and Language*. Cambridge: CUP.
5. Hornby, A.S. (2005) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*, 7th edition. Oxford: OUP.
6. Peaty, D. (1983) *Working with English Idioms*. Surrey: Thomas Nelson and Sons.

7. Sonomura, O.M. (1996) *Idiomacity in the Basic Writing of American English*. New York: Peter Lang Publishing, Inc.
8. Taylor, J.R. (1995) *Linguistic Categorization. Prototypes in Linguistic Theory*. Oxford: Clarendon Press.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Բալկունց, Ա. *Միրիապ*. Available at: <<http://granish.org>> [Accessed March 2016].
2. Չարենց, Ե. *Երկեր*. Available at: <<http://armenianhouse.org/charents/yerker>> [Accessed March 2016].
3. Տերյան, Վ. (1982) *Բանաստեղծություններ*. Երևան: Լույս հրատարակչություն:
4. Fitzgerald, F.S. (1984) *The Great Gatsby*. M.: Visšaja škola.
5. King, S. *The Green Mile*. Available at: <<https://cdn.netfiction>> [Accessed April 2016].
6. Грин, А. *Алые паруса*. Available at: <<https://librebook.ru>> [Accessed April 2016].
7. Есенин, С.А. (1983) *Избранные сочинения*. М.: Художественная литература.
8. Толстой, Л.Н. (1955) *Анна Каренина*. М.: Художественная литература.

Colour Symbolism in English Idioms

Colour plays an important role in society, having a direct impact on the emotional and psychic world of people. Due to the strong emotional connotations of colours, our feelings become more expressive and deep. The semantic approach of the same colour terms differs in different languages. Colour terms are of great use in idioms. The psychological, grammatical and semantic aspects of colour perception are culturally conditioned.

Символическое восприятие цвета в английских фразеологизмах

Цвет, как одно из основных средств выражения, играет важную роль из-за его прямого воздействия на эмоции ментального мира человека. Через него мы выражаем наши эмоции более красочно и выразительно. Семантико-познавательное восприятие одного того же цвета различается в разных языках. Цветовые термины широко используются во фразеологизмах. Основываясь на семантико-психологический аспект мы пришли к выводу, что у разных культур грамматическое, психологическое, семантическое восприятие цвета отличается, отражая явления, типичные только для того или иного языка.